ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 500-Ա/2 **«10» ապրիլի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 619-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի ապրիլի 27-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթը կազմակերպելու, մրցույթի հայտարարության տեքստը և հրավերի փաթեթը հաստատելու մասին» N 619-Ա/2 հրամանի հավելված N 2-ում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2.9-րդ կետում «մագիստրատուրայի ուսանող կամ դիպլոմավորված մասնագետ (բակալավրի աստիճան ունեցող անձը չի կարող ընդգրկվել Խմբում)» բառերը փոխարինել «բակալավրիատի երրորդ կուրսի ուսանողներ» բառերով.

2) 5.7-րդ կետում «մագիստրատուրայի ուսանող (այսուհետ՝ Ուսանող) (հնգամյա կրթության դեպքում չորրորդ կամ հինգերորդ կուրս))» բառերը փոխարինել «առնվազն բակալավրիատի երրորդ կուրսի ուսանող (այսուհետ՝ Ուսանող)» բառերով:

2. Սույն հրամանով նախատեսված գործողությունը տարածվում է սույն հրամանի ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ՝ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ